ԸՆՏԱՆԵԿԱՆ ՈՒՐԱԽ ՁԵՌՆԱՄՈՒԿ

ՍԱՆՁՈՒՄ ԵՆՔ ՀԱՄԱՑԱՆՑԸ

European Commission

MEDIA EDUCATION

ins@fe

World Vision Armenia

LIBERTYGLOBAL

Աջակցությամբ

Յուրաքանչյուր բառի համար գտեք ճիշտ անվանումը

..... = USB կրիչ (հիշողության կրիչ)

..... = մկնիկ

..... = հիշողության սկավառակ (CD Rom)

..... = վեբ խցիկ

..... = ցուցարկիչ (դիսփլեյ, մոնիտոր)

..... = բարձրախոս

..... = մկնիկի տակդիր

..... = տպիչ

..... = համակարգչային իրան



ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ Է

ԵԹԵ ՏԱՆԸ ՈՒՆԵՔ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

- Իսկ դուք գիտե՞ք, որ համակարգիչը նման է մարդուն, - հարցնում է Հելենը Աննային ու Ալեքսին:

Հելենը ապրում է մոտակայքում: Նա համալսարանում ուսանում է հաշվողական տեխնիկա և ժամանակ առ ժամանակ խնամում է Աննային ու Ալեքսին:

Աննայի և Ալեքսի ծնողները վերջերս ձեռք են բերել նոր մոդելի համակարգիչ: Այն տեղադրված է հյուրասենյակի հարմարավետ անկյունում: Նրանց թույլատրված է համակարգչից օգտվել օրական կես ժամ միայն տնային առաջադրանքներն ավարտելուց հետո:

Կեսօրին Աննայի ու Ալեքսի ծնողները Հելենին հրավիրեցին թեյելու և հարցրեցին, թե արդյո՞ք նա կարող կարգաբերել համակարգիչն ու միացնել համացանցին:

- Ինչպե՞ս կարող է համակարգիչը լինել մարդու նման,-ծիծաղելով հարցնում է Ալեքսը:

- Համակարգչային հիշողությունն ու մշակիչը (processor - պրոցեսոր) աշխատում են քո հիշողության և ուղեղի նման, պարզաբանում է Հելենը:

- Հիշողության և մշակիչի շնորհիվ դու կարող ես պահպանել մեծ ծավալով կարևոր **համակարգչային ֆայլեր**, օրինակ՝ ծրագրեր, նկարներ, փաստաթղթեր, խաղեր և երաժշտություն: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր համար նախատեսված առանձին տեղ,-շարունակում է նա:

- Հը՛մ, չի՞ նշանակում դա արդյոք, որ համակարգչի աշխատանքը փոքր-ինչ նման է դարակների պահարանին, - հարցնում է Աննան:

- Այդպե՛ս էլ կա,-պատասխանում է Հելենը՝ գլուխը թափահարելով. – այն բացառությամբ, որ համակարգիչը գիտի՝ որտեղ է ԱՄԵՆ ԻՆՉ պահված: Բացի այդ, դու կարող ես հրամայել քո համակարգչին կատարել ամեն տեսակի զարմանալի բաներ՝ օգտագործելով այնպիսի միջոցներ, ինչպիսիք են **համակարգչային ծրագրերը**:

Ալեքսը վեր է թռչում տեղից:
- Իհարկե՛, ես գիտեմ դրանց մասին, մենք դրանց անվանում ենք **ծրագրաշար** (software ծրագրային ապահովում):

Աննան մնում է ապշած:
- Տարօրինակ է հնչում:

- Իսկ որքան ծրագրաշար կարելի է խցկել համակարգիչ, -հարցնում է նա:
- Դրա կարիքը չկա. ծրագրաշարը համակարգչի անբաժանելի և անտեսանելի մաս է, - ասում է հայրիկը: - Գրելու, նկարելու կամ խաղալու համար դու օգտագործում ես համապատասխան համակարգչային ծրագրեր՝ տեքստային և գրաֆիկական խմբագրեր:

Համակարգիչն ունի նաև **սարքաշար** (hardware- ապարատային միջոցներ), որոնք դու տեսնում ես, օրինակ՝ համակարգչային իրանը, մկնիկը, ցուցարկիչը, տպիչը և **վեբ խցիկը**:

Ծրագրաշարը համակարգչի ուղեղն է, իսկ սարքաշարը՝ մարմինը:

Աննան լսում է՝ ինչպես են ծնողները խոսում համացանցի մասին:
- Ի՞նչ է «համացանցը»,- հարցնում է նա:
- Դա համակարգչային ցանց է, - պատասխանում է մայրիկը:
- Համացանցի միջոցով քո համակարգիչը միանում է ողջ աշխարհում գտնվող այլ համակարգիչների հետ, ինչպես որ քո հեռախոսն է մալուխային կապով միանում այլ հեռախոսների:



- Համացանցի հրաշալի կողմերից մեկն այն է, որ նրա միջոցով դու կարող ես նամակ գրել կամ խոսել աշխարհի ցանկացած վայրում գտնվող ցանկացած մարդու հետ:

- Հելե՛ն, որքա՞ն ապահով կլինի մեր համակարգիչը, եթե մենք այն միացնենք համացանցին, - հարցնում է մայրիկը՝ իր անհանգիստ հայացքը շրջելով դեպի Հելենը:

Հելենը բացատրում է, որ համակարգիչն ունի հազարավոր մուտքեր՝ **պորտեր** (ports), որոնք կարող են տեղեկատվություն ստանալու և ուղարկելու համար բացվել և փակվել յուրաքանչյուր անգամ համացանցին միանալիս:

- Դա նման է մի մեծ ամրոցի, որն անհրաժեշտ է պաշտպանել,- ասում է նա:

- Բայց ինչպե՞ս կարող ենք պաշտպանել այդքան մուտքերը, Հելե՛ն. նույնիսկ Ալեքսը չի կարող դա անել,-հարցնում է Աննան:

- Ես ձեզ բոլորիդ մի քանի բան կհուշեմ, - ասում է Հելենը ու սկսում բացատրել: - Ապահով լինելու համար դուք պետք է վստահ լինեք, որ ձեր համակարգչին չի սպառնում որևէ վտանգ…

ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՆՔ ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հարձակումներ

- Գիտեի՞ր, որ չպաշտպանված համակագիչը կարող է հարձակման ենթարկվել աշխարհի տարբեր մասերում բնակվող չարամիտ մարդկանց կողմից: Դրա համար քեզ հարկավոր է հրապատ (fi rewall): Այն նման է սահմանային անցակետի: Սահմանապահները ստուգում են ձեր համակարգիչ մտնող և այնտեղից դուրս եկող ամեն ինչ: Հիմա ես կտեղադրեմ այդպիսի մի ծրագիր, - ասաց Հելենը:

Առողջ համակարգիչ

- Իսկ դու գիտե՞ս, որ կան ոչ միայն օգտակար, այլ նաև վնասակար ծրագրեր, որոնք կարող են տարածվել ողջ ցանցով, - շարունակեց նա, - վիրուսները, որդերը, տրոյական ձիերն ու լրտեսածրագրերը վտանգավոր են. նրանք կարող են վարակել ձեր համակարգիչը… Ճիշտ այնպես ինչպես մենք՝ մարդիկ, մրսում կամ հիվանդանում ենք գրիպով:

- Իսկ ի՞նչ անենք, որ նա չհիվանդանա, Հելե՛ն,-հարցրեց Աննան:

Հելենը պայքարի կոչ արեց:

-Պայքարե՛ք վիրուսների և լրտեսածրագրերի դեմ՝ օգտագործելով հակավիրուսային և հակալրտեսային ծրագրեր: Դրանք պաշտպանում և պահպանում են ձեր համակարգիչը: Երբեք համացանցում մի՛ նավարկեք, եթե ձեր համակարգիչը պաշտպանված չէ: Այն նման է առանց սահմանապահների սահմանի: Եթե այն շարունակում է վարակվել, զանգահարե՛ք ինձ,-պատասխանեց Հելենը:

- Եթե համակարգիչը սկսում է իրեն տարօրինակ պահել, նշանակում է, որ այն հավանաբար վարակված է: Եթե նրա արագությունը սովորականից թույլ է կամ ձեր հիմնական էջը փոխվում է, եթե դուք ուղղորդվում եք անծանոթ էջեր կամ ցուցարկիչին հայտնվում են փոքր պատուհաններ, ապա հնարավոր է, համակարգիչը հիվանդ է «գրիպի» ծանր տեսակով:



- Վիրուսով «վարակվում» եք, երբ բացում եք անծանոթ անձանցից ստացված էլեկտրոնային նամակները կամ նրանց կից հաղորդագրությունները, որևէ անծանոթ կայքից խաղ կամ երաժշտություն եք ներբեռնում, վարակված լազերային դիսկ (CD-ROM) կամ էլ հիշողության կրիչ եք օգտագործում:

Կարող եք «վարակվել» նաև չպաշտպանված համակարգչից օգտվելիս: Թեյասեղանին թողնելով համեղ թխվածքաբլիթները՝ Հելենը ստիպված անցավ գործի՝ համակարգչում տեղադրելով երկու կարևոր ծրագրեր՝ հակավիրուսային և հակալրտեսային:

Իսկ Աննայի գլուխը պտտվում էր այդքան շատ նորություններից և նա ընդմիջման … նաև՝ թխվածքաբլիթների կարիք ուներ:

Խնդրե՛ք ձեր ծնողներին որպեսզի ձեզ ուղարկեն կից հաղորդագրությամբ էլեկտրոնային նամակ կամ դա արե՛ք ինքներդ: Կատարե՛ք հետևյալ վարժությունը. մկնիկի աջ սեղմակի օգնությամբ այն պահե՛ք (Save) ձեր համակարգչի աշխատանքային սեղանին: Այդ փաստաթղթի վրա մկնիկի աջ սեղմակը պահելով՝ ընտրե՛ք scan (դիտել, զննել) հրամանը: Երբ պարզեք, որ փաստաթուղթն ապահով է, բացեք այն: Հիշե՛ք աջ սեղմակի հպումով կատարել ՊԱՀՊԱՆԵԼ, ԴԻՏԵԼ և ԲԱՑԵԼ (SAVE-SCAN-OPEN) հրահանգները:

1.

2.

3.

Մայրիկը նորից Հելենին թեյ մատուցեց և հոգոց հանելով տվեց հետևյալ հարցը.
- Իսկ ինչպե՞ս վարվենք փոստաղբի (spam) հետ:

Աննան, որը զբաղված էր նկարչությամբ, հանկարծ գլուխը բարձրացրեց:
Այդ ի՞նչ բառ էր, որ նա լսեց. Աղբ:

ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՆՔ ՓՈՍՏԱՂԲԻ ԴԵՄ

Հելենն ասաց, որ համացանցում շրջանառվող 10 նամակից 8-ը փոստաղբ է:

- Իսկ ի՞նչ է աղբը, ավելի ճիշտ, փոստաղբը, հարցրեց Աննան:

- Էլեկտրոնային փոստով մենք ստանում ենք թերթեր, վարձավճարի ծանուցումներ ու բացիկներ: Սակայն ստանում ենք նաև մեզ համար անպետք ապրանքների վաճառքի մասին նամակ-առաջարկներ: Մենք այդ նամակների թափոնը անմիջապես նետում ենք աղբարկղ,- բացատրեց հայրիկը:
- Փոստաղբը էլեկտրոնային նամակ է, որը մենք չենք ցանկացել ստանալ,-ավելացրեց մայրը:
- Այդ դեպքում, ինչու՞ է փոստաղբը այդքան վատ,-հարցրեց Ալեքսը:
- Փոստաղբի միջոցով կարող են տարածվել վիրուսներ: Այն կարող է գայթակղել ձեզ գնել անվստահելի կամ անօրինական ապրանքներ կամ այցելել անծանոթ կայքեր,-պատասխանեց նրան հայրը:

Ալեքսը ոգևոված էր էլեկրոնային փոստի միջոցով արտասահմանում բնակվող ընկերների և հարազատների հետ նամակներ փոխանակելու մտքից և ուզում էր իմանալ՝ ինչպես տարբերել փոստաղբը սովորական հաղորդագրությունից:

Հելենը բացատրեց, որ նա պետք է զգուշանա անծանոթ մարդկանցից ստացվող խոստումներով լի նամակներից, որոնք պարունակում են կից հաղորդագրություն, ինչպես նաև ակտիվացնի իր էլեկտրոնային փոստի փոստաղբային զտիչը:

Նա նաև ավելացրեց, որ մեկ էլեկտրոնային հասցե օգտագործելը հավանաբար կմեծացնի փոստաղբի թիվը:
- Ուրեմն, մեկ էլէկտրոնային հասցեն բավարար չէ՞, -հարցրեց Աննան:
- Եթե ցանցում իրականացնում ես բազմապիսի գործունեություն, ստեղծի՛ր մի քանի հասցե՝ մեկը էլեկտրոնային փոստով ընկերներիդ հետ հաղորդակցվելու համար, մյուսը զրուցարանի (chat) համար և ևս մեկը այն կայքի համար, որտեղ, օրինակ, ստեղծում եք պատկերասրահներ,-պատասխանեց Հելենը:

- Ամեն անգամ ձեր էլելտրոնային հասցեն վերում հրապարակելիս այն ոչ թե ամբողջությամբ գրեք,

այլ պարզապես նկարագրե՛ք՝ խուսափելու համար փոստաղբ տարածողների անհարկի գրոհներից,- ավելացրեց նա:

- Ահա՛ թե ինչպես կարելի է խելամիտ կերպով վարվել փոստաղբերի հետ,-ասաց Հելենը:
- Ալեքսն այնքան խելացի է, որ աղբը, ըը՛մ, փոստաղբը նրան դժվար թե կարողանա մոլորեցնել,- ասաց Աննան:

Vicky.Smith@northbell.com Ծննդյան էլեկտրոնային բացիկ

Herbert.Weiler@junkworld.com Ուրախ նկարներ

Sonia. Roberts@exporting.jp Ողջույն, ինչպե՞ս ես

Հետևե՛ք Հելենի խորհրդին և սովորե՛ք՝ ինչպես նկարագրել ձեր էլեկտրոնային հասցեն, երբ ձեզ իսկապես հարկավոր է այն հրապարակել ցանցում: Դուք այսպիսով կխուսափեք փոստաղբ տարածողների անհարկի գրոհներից:

cybercat.smith@mymail.com = cybercat dot smith at mymail dot com

Որպես վարժություն կարող եք նկարագրել ձեր ընտանիքի անդամների էլ. հասցեները:

Ձեր էլ. փոստը .....

Ընտանեկան էլ. փոստը .....

Ձեր մայրիկի էլ. փոստը .....

Ձեր հայրիկի էլ. փոստը .....

ՆԱՎԱՐԿՈՒՄ ԵՆՔ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

- Լա՛վ, Հելեն, արի՛ նավարկենք,-ոգևորված ասաց Ալեքսը:
Աննան քիչ էր մնում աստիճաններով վերև վազեր՝ իր նոր լողազգեստը հագնելու համար, երբ Ալեքսը ծիծաղելով նրան բացատրեց, որ համացանցում նավարկելն ընդամենը արտահայտություն է:

Մինչև Հելենի կշարունակի, եկե՛ք օգնենք Աննային: Նայե՛ք վանդակում նշված գործողությունները և շրջանակի մեջ առե՛ք նրանք, որոնց իրականացումը հնարավոր է միայն համացանցին միացած լինելու դեպքում:

Էլ. Փոստ

Խաղեր խաղալ

Ֆիլմ դիտել

Ծրագրի ներբեռնել

Երաժշտության ունկնդրել

Զանգահարել

Տեղեկատվություն որոնել

Պատմվածք գրել

Զրուցարանում

Նկարել

Թվային խցիկից նկար ներբեռնել

Նկարներ ուղարկել

Ապրանքներ գնել

Նկար խմբագրել

Հելենը բացատրեց, որ համացանցում «նավարկելու» միջոցով կարելի է գտնել ամենատարբեր թեմաների առնչվող տեղեկություն: Բոլոր կայքերն ունեն հասցե, օրինակ՝ *http://www.webwise.ie*: Սակայն նրանց թիվն այս լայն աշխարհում այնքան մեծ է, որ որոշ խելացի մարդիկ ստեղծել են որոնման համակարգեր (Google. Lycos, Yahoo և այլն)՝ գլխաբառերի օգնությամբ կայքեր որոնելու համար: Սա լուսաբանելու համար՝ Հելենը բաց արեց համացանցային զննարկիչը և URL դաշտում հավաքեց որոնման համակարգի հասցեն (*http://kids.yahoo.com*):

-Որոնման համակագերը այնքա՜ն դյուրին են դարձնում համացանցային օվկիանոսում «ձուկ որսալը»,-ասաց Հելենը:

-Խելացի նավավարները կարող են տարբերել լավ ձկները վատերից:

Ալեքսի մատերը քոր էին գալիս. նա ուզում էր տեղեկություն գտնել տիրանոզավրի՝ (Tyrannosaurus Rex) աշխարհի ամենահզոր դինոզավրի մասին: Նա մուտքագրեց՝ «Tyrannosaurus Rex» և ահա՛ որոնման արդյունքում ստացված «տեղեկույթը»: Ալեքսն իսկապես հետաքրքրված է: Նա գտել է երեք կայք՝ հիանալի տեղեկություններով և նկարներով:
-Հոյակա՛պ է: Սրա օգնությամբ ես դպրոցի համար կգրեմ ամենալավ զեկույցը ու կցնցեմ բոլորին,- ասաց նա՝ շարունակելով, -այն այնքան գրավիչ կլինի՝ նկարներով ու մնացած ամեն ինչով…
-Անշուշտ կկարողանայիր,-ասաց նրան Հելենը,-բայց երբեք մի՛ վստահիր գտածդ առաջին լավ էջին: Ստուգի՛ր առնվազն երեք տարբեր կայքեր և համեմատի՛ր նրանց բովանդակությունը: Հիշի՛ր՝ համացանցից օգտվելու հնարավորություն ունեցող յուրաքանչյուր անձ կարող է ցանցում գրել ու հրապարակել ցանկացած տեղեկություն:
-Իսկ զեկույց գրելիս միշտ նշի՛ր, թե ինչ աղբյուրից ես վերցրել տեղեկությունը և նկարները… իսկական գիտնականը պետք է վարվի այդ կերպ:

Ծնողների հետ միասին համացանցային զննարկիչում հավաքեք http://kids.yahoo.com հասցեն: Գտե՛ք տիրանոզավրի մասին տեղեկությունները և պարզե՛ք՝ երբ է այն բնակվել երկրագնդի վրա: Փորձե՛ք նաև գտնել տիրանոզավրի մի լավ նկար: Չմոռանաք համեմատել երեք տարբեր կայքերից ստացած տեղեկությունները:

Ե՞րբ է ապրել տիրանոզավրը .....
Աղբյուրներ .....
.....

Ինչպիսի՞ն է եղել նրա տեսքը .....
.....
Աղբյուրներ .....

Եթե ունեք տպիչ, կարող եք տպել նկարը և այն փակցնել նշված հատվածում:

Ալեքսն ուզում է բոլոր երեք կայքերը հիշել համակարգչի մեջ, ուստի, Հելենի օգնությամբ, նա պահպանում է այդ էջերը՝ գործիքաշարի (tools) վերևում սեղմելով Favorites հրահանգը: Նա կարող է նաև իր ֆայլերի համար նոր թղթապանակ ստեղծել՝ Աննայի ֆայլերից առանձին պահելու համար: Ալեքսը հպարտ է իր կատարած աշխատանքով, իր ծնողներն էլ հպարտանում են նրանով: Աննան նույնպես հպարտանում է նրանով, բայց նաև փոքր-ինչ խանդում է:

Ծնողների հետ միասին համացանցային զննարկիչում հավաքե՛ք http://kids.yahoo.com հասցեն: Այնուհետև որոնե՛ք տեղեկություններ, օրինակ Տիրոնազավրին վերաբերող: Ձեր նախընտրած երեք ամենահետաքրքիր կայքերը պահպանեք Favorites (Սիրելի կայքեր) ցանկում: Կարող եք նաև ստեղծել ձեր թղթապանակը:

1.



2.

3.

-Հիշե՛ք, երիտասարդ նավարկողներ,-ասաց Հելենը, -երբեմն համացանցում ինչ-որ բան փնտրելիս հնարավոր է գտնել կայքեր, որոնք ոչ մի կապ չունեն ձեր փնտրած տեղեկության հետ: Դուք կարող եք հանդիպել որոնվող նյութին չառնչվող, անվստահելի կամ ուղղակի տհաճ կայքերի: Եթե պատահաբար գտնեք վատ բովանդակություն, որը ձեզ անհարմարություն կպատճառի, խոսե՛ք ձեր ծնողների հետ, որպեսզի վերջիններս այդ մասին հայտնեն թեժ գծին: Այդպիսով դուք կնպաստեք համացանցային աշխարհի բարելավմանը:

ՀԵԼԵՆԻ ՈՍԿԵ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- *Օգտագործե՛ք հակավիրուսային և հակալրտեսային ծրագրեր և փոստաղբային զտիչներ: Համացանցում միշտ նավարկե՛ք պաշտպանված համակարգչով:*
- *Եթե ձեր համակարգիչը սկսում է իրեն տարօրինակ պահել, դա նշանակում է, որ այնտեղ կարող է լինել վիրուս: Անմիջապես կապվե՛ք մասնագետի հետ:*
- *Արձագանքե՛ք միայն ծանոթ մարդկանցից ստացված նամակներին*
- Սովորություն դարձրե՛ք զննել էլեկտրոնային նամակներին կցված հաղորդագրությունները, նախքան դրանք բացելը
- Ձեր էլեկտրանային փոստի հասցեն պահե՛ք հնարավորինս գաղտնի. այն մի՛ հրապարակե՛ք վեբում
- *Խուսափե՛ք կարճ հաղորդագրություններով (SMS) ուղարկվող փոստաղբից: Ձեր բջջային հեռախոսի համարը տվե՛ք միայն ծանոթ մարդկանց:*

Հելենի ոսկե կանոնները համացանցում նավարկելու համար

- *Համեմատե՛ք ձեր գտած տեղեկությունները*
- *Զգոն եղե՛ք նոր կայքեր կամ ֆայլեր գտնելիս*
- *Եթե ձեզ հանդիպում է այնպիսի բովանդակություն, որն անհարմարության տեղիք է տալիս, ասե՛ք այդ մասին ձեր ծնողներին և խնդրե՛ք, որպեսզի նրանք այդ մասին հայտնեն համապատասխան մարմինների:*

Հելենի առաջարկած օգտակար հղումները

http://www.webwise.ie/index.aspv
- Հետևելով այս հղմանը Աննան և Ալեքսը առցանց դասընթացների միջոցով կիմանան՝ ինչպես են Նիամն ու Ֆիոնը սովորում «նավարկել» համացանցում

www.makeitsecure.ie և *www.safe.am*
– Այս կայքերում կարող եք գտնել անվտանգության վերաբերյալ օգտակար խորհուրդներ

ՍՏՈՒԳԵ՛Ք ՁԵՐ ՏԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

- Տան բոլոր համակարգիչներն ապահովված են հակավիրուսային և հակալրտեսային ծրագրերով ու փոստաղբային զտիչներով, որոնք մշտապես թարմացվում են:
  ԱՅՈ ՈՉ

- Եթե ծնողներս կամ ես ունենում ենք համակարգչի հետ կապված խնդիր, մենք դիմում ենք մասնագետի օգնությանը
  ԱՅՈ ՈՉ

- Մեր համակարգչում յուրաքանչյուրս ունի առանձին գրանցման հնարավորություն
  ԱՅՈ ՈՉ

- Մենք չենք բացում անծանոթներից ստացված էլեկտրոնային նամակները
  ԱՅՈ ՈՉ

- Մենք միշտ զննում ենք նամակներին կցված հաղորդագրությունները
  ԱՅՈ ՈՉ

- Մենք ընտանիքով օգտագործում ենք համակարգչային զտիչ
  ԱՅՈ ՈՉ

- Համացանցում աշխատանքը ավարտելուց հետո, մենք համակարգիչը անջատում ենք ցանցից
  ԱՅՈ ՈՉ

- Գաղտնաբառերը ընտանեկան գաղտնիք են. մենք դրանք ոչ մեկի չենք ասում
  ԱՅՈ ՈՉ

- Մենք չենք բացում հանկարծակի բացվող պատուհանները և չենք հետևում դրանցում նշված հրամաններին: Դրանք կարող են վիրուսներ պարունակել:
  ԱՅՈ ՈՉ

- Մենք կանոնավոր կերպով ստեղծում ենք կարևոր ֆայլերի պահուստային պատճենները
  ԱՅՈ ՈՉ

Քանի՞ հարցի եք պատասխանել “ԱՅՈ”

9-ից 10 դրական պատասխան. Շնորհավորում ենք: Դուք համացանցային անվտանգության մասնագետ եք: Շարունակե՛ք ձեր հրաշալի գործը առցանց համակարգում և թարմացրե՛ք համացանցից գրագետ օգտվելու վերաբերյալ ձեր գիտելիքները՝ այցելելով www.webwise.ie և www.safe.am կայքերը:

6-ից 8 դրական պատասխան. Շատ լավ է: Ինչպես երևում է, դուք շատ բաներ գիտեք համակարգչի և համացանցի մասին: Այնուամենայնիվ, ժամանակ հատկացրեք ավելին իմանալու համար և անպայման այցելե՛ք www.webwise.ie և www.safe.am կայքերը:

6-ից քիչ դրական պատասխան. Ձեր գիտելիքները կատարելագործման կարիք ունեն: Համացանցում «նավարկելը» կարող է լինել զվարճալի կամ ուսուցողական, եթե զինված եք ապահովության կանոններով: Խորհրդակցե՛ք ծնողների կամ ուսուցիչների հետ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար: Մի՛ մոռացեք այցելել www.webwise.ie և www.safe.am կայքերը:

Արդյո՞ք ճիշտ եք հասկացել

Լրացրե՛ք բաց թողնված բառերը... եթե կասկածում եք, նայե՛ք տեքստը.

- Երբեք մի՛ նավարկեք համացանցում, եթե ձեր համակարգչում չկա .....ծրագիր:
- Դուք կարող եք ձեռք բերել ..... , եթե բաց անեք ..... մարդկանցից ուղարկված նամակներին կցված հաղորդագրությունները, ... խաղեր կամ երաժշտություն որևէ կայքից, օգտագործեք ..... լազերային դիսկ կամ ..... կամ «նավարկեք» ..... համակարգչով:
- Եթե ձեր համակարգիչն իրեն սկսում է պահել ..... , այն հավանաբար վարակված է:
- Եղե՛ք աչալուրջ ..... մարդկանցից ստացվող նամակներից, որոնք պարունակում են .... և լի են խոստումներով: Նրանք կարող են լինել .....:
- Միայն ..... էլ. փոստի օգտագործումը ամեն նպատակի համար բավարար չէ: Դուք այսպիսով կարող եք մեծացնել ..... ի թիվը:
- Մի՛ վստահեք ձեր գտած ..... լավ կայքին: Ստուգե՛ք առնվազն ..... տարբեր կայքեր և ..... նրանցում գտած տեղեկությունը: Հիշե՛ք, համացանցից օգվելու հնարավորություն ունեցող ..... կարող է ստեղծել և ..... տեղեկություններ ցանցում:
- ..... և ..... ԼԱՎ գործիքներ են և պաշտպանում են ձեր համակարգիչը:
- Եթե դուք պատահաբար գտնում եք վատ բովանդակություն, որը անհարմարության տեղիք է տալիս, ... այդ մասին ձեր ..... հետ:
- ..... ձեր ծնողներին, եթե հանդիպում եք այնպիսի բովանդակության, որը անհարմարության տեղիք է տալիս:



03



ՀԱՂՈՐԴԱԿՑՎՈՒՄ ԵՆՔ ;-Ը

ԳԼՈՒԽԿՈՏՐՈՒԿԻ ՄԱՍՆԻԿՆԵՐ

- Ե՞րբ կարող ենք օգտվել զրուցարանից,-Աննան հարցրեց Հելենին՝ հուզված վերիվար ցատկոտելով:

Հելենը Աննային ու Ալեքսին խնամում է, երբ նրանց ծնողները տանը չեն: Նրանք ավարտել են իրենց տնային աշխատանքը և որոշել են միասին նստել ու իրենց հատկացված կես ժամը օգտագործել էլ. փոստի ու զրուցարանի մասին նոր բաներ սովորելու համար: Աննան հատկապես շատ է ուզում զրուցարանով հաղորդակցվել, քանի որ արձակուրդի ընթացքում ընկերացել է Ջենիի անունով մի աղջկա հետ, որը ապրում է Անգլիայում: Վերջինս նրան տվել է իր զրուցարանի հասցեն:

- Կարող եք սկսել հաղորդակցվել զրուցարանում հենց որ ունենաք էլ. փոստի և զրուցարանի հասցեներ, - ժպտալով ասաց Հելենը:

- Ի՞նչ բան է էլեկտրոնային գրանցումը,-հարցրեց Աննան:

Հելենը նրան բացատրեց.

- Համացանցից դուրս՝ իրական աշխարհում, երբ դու բաժանորդագրվում ես ամսագրի կամ ձեռք ես բերում մարզասրահի անդամատոմս, դու լրացնում ես ձևաթուղթ՝ նշելով տեղեկություններ քո մասին: Նույնը պահանջվում է անել էլ. փոստի կամ զրուցարանի ծառայություններից օգտվելու համար: Ընտրում ես ծառայությունը, ասենք, yahoo, hotmail, gmail, msn կամ icq, ապա՝ գրանցվում ու այդպիսով անդամագրվում տվյալ ծառայությանը:

Նշե՛ք, թե հետևյալ տեղեկությունները որքանով են գաղտնի ձեզ համար. ■ *խիստ գաղտնի* ■ *բավականին գաղտնի* ■ *ոչ այնքան գաղտնի*

ՀԵՌԱԽՈՍԻ ՀԱՄԱՐԸ	■	■	■	ՄԱՁԵՐԻ ԳՈՒՅՆԸ	■	■	■
ԱՆՈՒՆԸ	■	■	■	ԵՐԿԻՐԸ	■	■	■
ԴՊՐՈՑԸ	■	■	■	ՏԱՆ ՀԱՍՑԵՆ	■	■	■
ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆՈՒ ԱՆՈՒՆԸ	■	■	■	ԾՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ	■	■	■
ԷԼ. ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵՆ	■	■	■	ՆԿԱՐՆԵՐԸ	■	■	■
ՏԱՐԻՔԸ	■	■	■				

-Այն տեղեկությունները, որ դու տալիս ես քո մասին ստեղծում են քո էլեկտրոնային նկարագիրը՝ անձնական էջը (profi le) -շարունակեց Հելենը:

-Երբ դու օգտվում ես համացանցից, քո անձնական էջը կամ քո մասին նշված տեղեկությունները կարող են հասանելի դառնալ տասնյակ, հարյուրավոր, հազարավոր և անգամ միլիոնավոր մարդկանց:

Տեսնելով Աննայի շվարած հայացքը՝ Հելենը փորձում է նրան բացատրել ևս մի քանի բան:

-Գիտե՞ս արդյոք «Գուշակի՛ր ով է» խաղը, որ մենք ժամանակին խաղում էինք: Երբ մարդու տարիքի, աչքերի գույնի կամ սանրվածքի մասին հարցերի միջոցով փորձում էին պարզել նրա ով լինելը:

-Ուրեմն մարդիկ փորձու՞մ եք պարզել, թե ով եմ ես,- անմեղ ձայնով հարցրեց Աննան:

- Երբեմն այո՛, -պատասպանեց Հելենը:

-Դու կարող ես առանց այդ մասին մտածելու քո մասին չափից շատ տեղեկություններ հայտնել այնպիսի մարդկանց, որոնց անգամ չես էլ ճանաչում: Անգամ եթե տալիս ես միայն քո կեղծանունը, էլ. փոստը, նկարը կամ էլ դպրոցի համարը, դա արդեն անծանոթների համար բավականին շատ տեղեկություն է: Ավելին, քան իրականում պետք է: Անձնական տեղեկությունները նման են փազլ խաղին: Փոքր կտորները իրար միացնելով, նույնիսկ եթե դրանք շատ են տարբերվում միմյանցից՝ անծանոթ մարդիկ, կարող են ստանալ ավելի մեծ և մանրակրկիտ, մանրամասնություններով լի նկար:

- Դա այնքան էլ հաճելի չէ,- հանգիստ ասաց Աննան:

- Ինչպե՞ս կարող ենք դա թույլ չտալ:

- Պարզապես համացանցից օգտվելիս եղի՛ր զգույշ, ինչպես իրական՝ ցանցից դուրս աշխարհում, - պատասխանում է Հելենը: Լրագրային կամ թերթի հոդվածում դու չես հրապարակի քո անունը, տարիքը, արձակուրդի ժամանակ արված նկարները և հեռախոսահամարը: Ոչ էլ նման տեղեկությունը կհրապարակես հայտարարության մեջ կամ գովազդային վահանակի վրա, որ բոլորը տեսնեն, այնպես չէ՞:

- Գիտեմ,-ասաց Աննան,-կարող եմ հորինել կեղծ տեղեկություններ իմ մասին: Կարող եմ ձևացնել, որ ուրիշ մարդ եմ… Ի՞նչ կասես դրա մասին:

-Լավէ,որմտածումես,-ասացՀելենը,-բայցքոանձնականտվյալներիպաշտպանությունըչինշանակում կեղծ տեղեկություններ տարածել քո ինքնության մասին: Դու այնուամենայնիվ պատասխանատու ես համացանցում քո կատարած յուրաքանչյուր գործողության ու արտահայտության համար:

ԱՆՆԱՆ ՍՏԵՂԾՈՒՄ Է ԻՐ ԱՆՁՆԱԿԱՆ ԷՋԸ

- Դե՛, եկե՛ք Աննայի համար բացենք էլեկտրոնային փոստ,-ասաց Հելենը:
-Մենք կստեղծենք այնպիսի հասցե, որը չի բացահայտի քո լրիվ անունը: Քո ընկերներն ու ընտանիքի անդամները երբեմն քեզ ասում են Զի. ուրեմն արի մտածենք այսպիսի անուն՝ zee@mymail.com: Ի՞նչ կասես, - հարցրեց Հելենը:

Աննան գլխով արեց:

- Զևը լրացնելիս մենք չենք օգտագործի քո լրիվ անունը և չենք տա անձնական այլ տեղեկություններ: Դու պետք է պաշտպանես քո էլ. փոստը քո իսկ ընտրած գաղտնաբառով: Գաղտնաբառը քո փոստարկղի բանալին է:

- Խելացի մտածված գաղտաբառը պետք է լինի երկար, կազմված լինի առնվազն 8 նիշից, որտեղ կլինեն և՛ մեծատառեր, և՛ փոքրատառեր, ինչպես նաև ունենա թվեր և կետադրական նշաններ: Մտածի՛ր այնպիսի արտահայտություն, որը քեզ ինչ որ բան կհուշի: Ասենք՝ ավագ եղբայրս՝ Ալեքսը, 11 տարեկան է: Այնուհետև վերցրու՛ ամեն բառի առաջին տառը և կստանաս այսպիսի գաղտնաբառ՝ aea11t: Ավելացրու մեծատառեր, օրինակի համար՝ aeA11T և վերջապես՝ ինչ-որ կետադրական նշան ու՛ քո գաղտնաբառը պատրաստ է՝ ae՝A,11T:

- Բայց հիշի՛ր, Աննա, գաղտնաբառը լավ է միայն այն ժամանակ, երբ այն գաղտնի ես պահում: Ոչ մեկի մի՛ ասա գաղտնաբառդ, եթե իհարկե դեմ չես որ այլ անձինք կարդան քո նամակները կամ հանդես գան քո անունից ու ասեն բաներ, որ ինքդ երբեք չէիր ասի:

Օգնե՛ք Աննային ստեղծել լավ գաղտնաբառ՝ հետևելով Հելենի հուշումներին:

Աննան ընտրում է գաղտնաբառը և այն գրի առնելով պահում է իր սենյակում:

- Հաջորդ քայլը կլինի Աննայի համար զրուցարանի հասցե և անձնական էջ ստեղծելը,-առաջարկեց Հելենը:
- Ես կարող եմ լրացնել ձևը, եթե միայն բացատրեք, թե ինչ է պետք անել: Բայց սրանք ի՞նչ *աստղեր* են,-հարցրեց նա:

- Դրանք են այն դաշտերն, որոնք մենք պետք է լրացնենք,- պատասխանեց Հելենը:

* Անուն՝ Զի: Zee

-Արի՛ օգտագործենք քո մականունը: Եթե կարևոր ես համարում, կարող ես նշել նաև անունդ, բայց ոչ ազգանվանդ հետ:

* Մականուն՝ Զի Zee

* Ձեր մականունը պետք է լինի պարզ և չեզոք. Այն չպետք է բացահայտի ձեր իրական անունը: Աննան որոշեց փորձել զին ևս մեկ անգամ: Ձեր մականունը կարող է նաև կոչվել «ցուցարկիչի անուն», քանի որ այդ հենց անունով են մարդիկ ձեզ տեսնում իրենց ցուցարկիչներին:

* Էլ. փոստ՝ zee@mymail.com

* Ահա՛ ձեր բոլորովին նոր, անձնական էլ. Փոստը՝ zee@mymail.com

* Երկիր՝ Հայաստան

-Դու կարող ես նշել քո երկրի անունը, սակայն գաղտնի պահել հասցեն, հեռախոսի համարը, դպրոցի համարը կամ ակումբի անվանումը, որին անդամակցում ես:

* Ծննդյան թիվ՝ 01/01/2000

-Մենք այստեղից կընտրենք քո ծննդյան թիվը, բայց անհրաժեշտություն չկա նշելու ճշգրիտ ամսաթիվը:

-Իսկ հիմա, Ալե՛քս, դու վերջապես կարող ես Աննայի նկարագրում ավելացնել վերջին փոքրիկ, բայց շատ կարևոր նշումը ,- ասաց Հելենը:

- Բաց արա՛ նրա նկարագրի կարգավորումները և ընտրի՛ր «ԱՆՁՆԱԿԱՆ» հրամանը, որպեսզի Աննայի պրոֆիլը կարողանան տեսնել և նրա հետ հաղորդակցվել միայն իր ընտրած մարդիկ:

- Սպասի՛ր, ես կանհատականացնեմ Աննայի պրոֆիլը՝ ստեղծելով վիրտուալ կերպարը, - հուզված ասաց Ալեքսը: Այնուհետև Աննան ցուցակի միջից ընտրեց իրեն ամենից շատ դուր եկած պատկերը:

- Ջեննին առաջին մարդը կլինի, որին կավելացնենք մեր հասցեների ցուցակում, -շարունակեց Ալեքսը:

-Այ այսպես, Աննա՛. տե՛ս ընկերդ ցանցում է:

Հետևելով Աննայի օրինակին՝ ստեղծե՛ք ապահով անձնական էջ: Այնուհետև ստեղծե՛ք այնպիսի անձնական էջ, որն ապահով չէ:

*Անուն՝	*Անուն՝ .....
Մականուն	Մականուն .....
Էլ.փոստ	Էլ.փոստ .....
Երկիր	Երկիր .....
Ծննդյան թիվ ..... / ..... /	Ծննդյան թիվ ..... / ..... / .....

ՆԿԱՐՆԵՐ ԵՎ ՎԵԲ ԽՑԻԿՆԵՐ

-Այժմ համակարգչից օգտվելու իմ հերթն է,- ասաց Ալեքսը:

-Կարո՞ղ ես ցույց տալ, թե ինչպես ուղարկեմ արձակուրդի ընթացքում արված մեր նկարները Ֆրանսիայում ապրող մորաքրոջս, Հելե՛ն:

-Իհարկե՛,-ասաց Հելենը:

- Կա համակարգչային ծրագիր, որը կարող եք անվճար ներբեռնել և օգտագործել գեղեցիկ երաժշտությամբ ուղեկցվող կադրեր պատրաստելու համար: Պարզապես հիշի՛ր, որ նկարներ պետք է ուղարկես միայն այն մարդկանց, որոնց վստահում ես: Համացանցի և բջջային հեռախոսի շնորհիվ նկարները կարող են հաշված վայրկյանների ընթացում «շրջել» ողջ աշխարհով մեկ, իսկ հետո հավերժ մնալ համացանցում: Էլ չեմ խոսում մեքենայությունների ենթակա այն պատկերների մասին, որոնք կարող են օգտագործվել կեղծ նկարներ պատրաստելու համար:

Նկարագրե՛ք պատկերված մարդուն:

.....

.....

.....

-

Այդ դեպքում ի՞նչ կասես վեբ խցիկների մասին,- հարցրեց Ալեքսը:

- Հայրիկն ասում է, որ ծննդյան տոների առթիվ վեբ խցիկ ենք գնելու՝ Ֆրանսիայի մեր զարմիկներին տեսնելու համար:
- Դե՛, նույնը վերաբերում է դրան, - ասաց Հելենը,-օգտագործի՛ր այն՝ միայն ծանոթ ու վստահելի

մարդկանց հետ հաղորդակցվելու համար: Որոշ մարդիկ վեբ խցիկները կարող են օգտագործել լրտեսության նպատակով: Ես միշտ իմ տեսախցիկն անջատում եմ, երբ այն ինձ պետք չէ: Հակառակ պարագայում այնպիսի զգացողություն ունեմ, կարծես ինչ-որ մեկը ինձ հետևում է:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԾԱՆՈԹՆԵՐԻ ՀԵՏ

Արդյո՞ք համացանցը պատշաճ տեղ չէ՝ հանդիպելու այն մարդկանց հետ, ովքեր սիրում են նույն բաները, ինչ մենք,-հարցրեց Ալեքսը:

- Անշու՛շտ,-պատասխանեց Հելենը:

-Դու կարող ես մասնակցել թեմատիկ քննարկումների (forum-ֆորում) կամ ինքդ սկսել որևէ քննարկում: Ճիշտ կլինի օգտվել երիտասարդների համար նախատեսված այնպիսի կայքերից, որոնք ունեն քննարկումը վերահսկող պատասխանատուներ՝ մոդերատորներ:

-Պետք է օգտագործես քո ողջամտությունը: Կան մարդիկ, որոնք իրենց անձի մասին հրապարակում են կեղծ տեղեկություններ: Նրանք կարող են գայթակղությամբ քեզնից կորզել քո մասին բավականին շատ տվյալներ և առաջարկել հանդիպում քեզ հետ: Անծանոթի հետ հանդիպելը այնքան էլ լավ գաղափար չէ: Բայց եթե իսկապես մտածում ես, որ կարող ես վստահել առցանց ընկերոջդ, որն ուզում է հանդիպել քեզ հետ, պատմի՛ր այդ մասին քո ծնողներին, որպեսզի նրանք քեզ ուղեկցեն: Ազնիվ մտադրություններ ունեցող ոչ մի իսկական ընկեր դրանից անհարմար չի զգա: Խնդիրներ կարող են ունենալ միայն այն մարդիկ, ովքեր թաքցնելու բան ունեն:

-Ալեքս «կարմիր գլխարկ»,-հռհռալով ասաց Աննան, որը երկար ժամանակ ականջ դրած լսում էր նրանց:

-Ուզու՞մ ես կարմիր գլխարկի նման խաբեությամբ գայլերի ճանկն ընկնել,- եղբորը ծաղրելով շարունակեց նա:

Հիմնվելով Հելենի գաղափարների վրա՝մտածե՛ք 3 այնպիսի խորհուրդների մասին, որն «Ալեքս կարմիր գլխարկը» կստանա Հելենից՝ համացանցային գայլերից պաշտպանվելու համար:

1. .....

2. .....

3. .....

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԷԹԻԿԱՆ

-Ամեն դեպքում զրուցարանը հիանալի բան է,-ասաց Աննան, որը մինչ ակնթարթային հաղորդագրություններ էր փոխանակում Ջեննիի հետ:

-Ի դեպ, գիտե՞ս՝ինչ է համացանցային էթիկան,-հարցրեց Հելենը:

-Ի՞նչ,-հացրեց Աննան:

- Դա նշանակում է համաշխարհային սարդոստայնում այլ անձանց հետ շփվելիս նրանց հետ վարվել այնպես, ինչպես կուզեիր, որ քեզ հետ վարվեին: Դա համացանցի «ոսկե կանոնն» է: Իհարկե, ոչ բոլորն են հետևում կանոններին, բայց դու ինքդ կարող ես ցուցաբերել պատասխանատու վարքագիծ:

- Դու նկատե՞լ ես, որ չաթով հաղորդակցվելիս մենք օգտագործում ենք նշանագրեր,-հարցրեց Հելենը:

- Այո՛, դա գործի ամենահեշտ մասն է,-հոգոց հանելով ասաց Աննան, որը բոլորովին վերջերս էր սկսել կարդալ ու գրել:

- Իսկ գիտե՞ իր, որ այդ պատկերները կոչվում են էմոթիկոն, Աննա՛,-մեծ եղբոր դերի մեջ մտած՝ ասաց Ալեքսը:

- Իսկ դու գիտե՞ս՝ ինչու են նրանք այդպես կոչվում,-արձագանքեց Աննան:

Ալեքսն այլևս այդքան վստահ տեսք չուներ:

- Ուրեմն այսպես, էմոթիկոնը մի պատկեր է, որն արտահայտում է քո հույզերը կամ զգացողությունը, - ասաց Հելենը՝ ուրախությունից կայծկլտացող աչքերով:

-Նրանք մեծ մասամբ օգտագործվում են՝ գրավոր հաղորդագրություններում թյուրիմացություններից խուսափելու համար…

Էլ. փոստով կամ չաթով հաղորդակցվելու հետ կապված ամենամեծ դժվարությունն այն է, որ քո ընկերները չեն կարող տեսնել՝ ժպտու՞մ ես, ջղաձիգ շարժումներ ես անում, թե՞ մռայլվում ես: Նրանք չեն տեսնում քո ԺԵՍՏԵՐԸ: Ոչ էլ կարող են լսել՝ ինչպիսին է քո ձայնը՝ մեղմ, գրգռված, թե՞ տխուր:

- Այդ պատճառով, կարևոր է, թե ինչպես ես գրում քո հաղորդագրությունները՝ ինչ տառեր, կետադրական նշաններ և էմոթիկոններ ես օգտագործում: Օրինակ՝ եթե գրում ես ԳԼԽԱՏԱՌԵՐՈՎ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, դա կարող է ընկերներիդ մոտ այնպիսի տպավորություն ստեղծել, որ նրանց վրա գոռում ես,- ժպտալով ասում է Հելենը:

- Մյուս կողմից, հաղորդագրություններով կարող ես ստեղծել ջղային և անտանելի մարդու տպավորություն: Այն երևույթը, երբ մարդիկ տարված ինչ-որ բանով ձևացնում են, թե ամեն ինչ գիտեն ու իրենց կարծիքները մեծամտամբար և անանուն են արտահայտում, կոչվում է ֆլեյմինգ:

Ինչպե՞ս կուզեիք, որ մարդիկ ձեզ հետ վարվեին առցանց համակարգում:

1. .....

2. .....

3. .....

- Թույլ տվե՛ք մինչև ձեր քնելու ժամը ցույց տամ, թե ինչպես պետք է ստեղծել ձեր էմոթիկոնները:

ՀԵԼԵՆԻ «ԲԱՂԱԴՐԱԱՏՈՄՍԸ»

Ինչ է հարկավոր.

- Համակարգիչ
- Նկարչական ծրագիր (օր.՝ Paint Shop Pro)
- Ակնթարթային հաղորդակցման ծրագիր (օր.՝MSN Messenger)
- ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Նախապատրաստում

Նկարե՛ք գծանկար կամ պատկեր՝ օգտվելով գրաֆիկական խմբագրման Paint Shop Pro, Photoshop, Paint և այլ ծրագրերից: Համոզվե՛ք, որ ձեր փաստաթուղթն ունի 20 պիքսել լայնություն և նույնքան բարձրություն: Պահպանե՛ք նկարը jpg, gif կամ bmp ձևաչափով: Եթե ցանկանում ենք օգտագործել արդեն գոյություն ունեցող պատկերով ֆայլ (jpg, gif կամ bmp), պարզապես փոխե՛ք վերը նշված փաստաթղթի չափը:

Այնուհետև տեղադրե՛ք այն անմիջական հաղորդակցման ծրագրում: Ահա՛ թե ինչ քայլեր են հարկավոր MSN Messenger ծրագրում ձեր նկարը պահպանելու համար:

1. Բացե՛ք MSN Messenger-ը
2. Գործիքաշար Հրահանգների Ցանկում ընտրեք My Emoticons հրամանը
3. Բացե՛ք այն
4. Բացե՛ք Find Image (գտնել պատկերը) հրամանը: Դա կարևոր է՝ հիշելու համար, թե որտեղ եք պահպանել ձեր նշագիրը:
5. Պատկերը գտնելուց հետո այն մգացրե՛ք մկնիկի սլաքով
6. Ընտրե՛ք անուն ձեր նշագրի համար
7. Հաստատե՛ք ձեր գործողությունները OK հրամանով
8. Կրկին սեղմե՛ք OK հրամանը



-Ահա՛, ձեր պատկերը այժմ կարող եք օգտագործել խոսակցություններում՝ որպես էմոտիկոն կամ ավատար, -ասաց Հելենը:
Ալեքսը նկարել էր փոքրիկ երես, որը պատկերում էր Աննայի դեմքը նոր զարթնած ժամանակ: Նա այդ նկարին ասում է «sleepicon» (քնկոտ դեմք), ինչը նյարդայնացնում է Աննային: Հելենը հասկացավ, որ մոտենում է երեխաների քնելու ժամանակը:
-Եվ վերջինը, - ասաց Ալեքսը սենյակ գնալու ճանապարհին:
-Այդ ի՞նչ տարօրինակ բառեր են մարդիկ օգտագործում ակնթարթային հաղորդակման ժամանակ:
- Դրանք տառային հապավումներ են, որտեղ յուրաքանչյուր տառ խորհրդանշում է նախադասության մեկ բառ: Բգե հապավումը, օրինակ, կարող է օգտագործվել «Բարի գիշե՛ր, երեխաներ» արտահայտությունը կրճատ ասելու համար,-պատասխանեց Հելենը:

ԳԱՂՏՆԱՁԵՐԾԵ՛Ք ԿՈԴԸ. Գտե՛ք զրուցարաններում կիրառվող ամենատարածված բառային հապավումներից մի քանիսի իմաստը:

^5	Computer
bbb	Good morning
comp	Parents over Shoulder
egbok	Later (Goodbye)
f2f	Keep it simple, stupid
gl	What's up?
gm	Lets meet in real life
hand	Love you forever
ilu, ily	Have a nice day
jj	Bye bye baby
k, kk	Face to Face
kiss	High 5
l8r	Everything going to be O.K.
lmirl	Okay, alright
ly4e	I love you
np	Just joking
S^, S'UP	No problem
POS	Good luck

Ստեղնաշարի գրանիշների համադրությամբ պատկերե՛ք հետևյալ էմոտիկոնները

Ժպիտացող դեմք .....
Տխուր դեմք .....
Թարթող աչքերով դեմք .....
Զարմացած դեմք .....
Մեծ ժպիտ .....
Լեզուն դուրս հանած .....

ՀԵԼԵՆԻ ՈՍԿԵ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- *Առցանց հաղորդակցման ժամանակ մի մոռացի՛ր պատասխանատվության մասին. մի՛ թաքնվիր ցուցարկիչի հետևում*
- *Ցանկալի է, որ օգտագործես մոդերատորներ ունեցող չաթերը և երիտասարդների համար նախատեսված ակնթարթային հաղորդակցման կայքերը*
- *Շրջանառության մեջ մի՛ դիր այնպիսի հաղորդագրություններ, նկարներ կամ նյութեր, որոնք կարող են լինել վտանգավոր*
- *Ստեղծի՛ր ապահով նկարագիր*
- *Նկարները փոխանցի՛ր միայն ծանոթ և վստահելի մարդկանց*
- *Սովորի՛ր մերժել կամ արգելափակել անցանկալի անձանց հասցեները*
- *Մի՛ գրանցիր անծանոթ մարդկանց հասցեները*
- *Հրաժարվի՛ր հանդիպել անծանոթների հետ, եթե նույնիսկ նրանք քո «առցանց ընկերներն» են: ԱՎԵԼԻ ԼԱՎ Է ԱՊԱՀՈՎ ԼԻՆԵԼ, ՔԱՆ ԱՓՍՈՍԱԼ*
- *Եթե համացանցից չես օգտվում, այն անջատի՛ր*
- *Վեր տեսախցիկն օգտագործի՛ր միայն ծանոթ մարդկանց հետ հաղորդակցվելու համար. անջատի՛ր այն, եթե չես օգտագործում*

ՀԵԼԵՆԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐԸ

http://www.watchyourspace.ie
– Այս կայքում դու կսովորես օգտագործել քո տարածքը. լինել ստեղծագործ, ճիշտ ներկայանալ և վերահսկել

http://www.thinkyouknow.co.uk www.safe.am
– Այս կայքերում ստուգեք ձեր գիտելիքները համացանցի ապահով օգտագործման մասին:

ՍՏՈՒԳԻՐ ՔՈ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Նախքան համացանցով անձնական տեղեկություններ փոխանցելը (անուն, հեռախոսի համար, հասցե, էլ. փոստ, դպրոցի անուն, կրեդիտ քարտի տվյալներ), ես ծնողներիցս թույլտվություն եմ խնդրում:
   ԱՅՈ ՈՉ

2. Ես միայն օգտվում եմ ակնթարթային հաղորդակցման այն զրուցասենյակներից, որոնք ծնողներս ստուգել են;
   ԱՅՈ ՈՉ

3. Երբ ես միացած եմ ցանցին, միշտ օգտագործում եմ մականուն, որը ոչինչ չի բացահայտում իմ մասին:
   ԱՅՈ ՈՉ

4. Իմ գաղտնաբառը գաղտնի եմ պահում: Երբեմն ես այն փոխում եմ:
   ԱՅՈ ՈՉ

5. Եթե էլեկտրոնային հաղորդագրությունը ինձ անհարմարություն է պատճառում կամ վախեցնում է, ես նրան չեմ պատասխանում: Ես այդ մասին անմիջապես ասում եմ ծնողներիս կամ մեծահասակ բարեկամներիս:
   ԱՅՈ ՈՉ

6. Եթե ուզում եմ հանդիպել մեկին, որին գտել եմ համացանցում, ես այդ մասին հայտնում եմ ծնողներիս, որպեսզի նրանցից մեկն ու մեկը ինձ միանա ու հանդիպում կազմակերպի հասարակական վայրում:
   ԱՅՈ ՈՉ

7. Համացանցում այլ անձանց հետ շփվելիս ես նրանց վերաբերվում եմ լավ և երբեք կոպիտ բովանդակությամբ հաղորդագրություններ չեմ ուղարկում:
   ԱՅՈ ՈՉ

8. Ես բացում եմ միայն ծանոթ մարդկանցից ստացված էլեկտրոնային նամակները:
   ԱՅՈ ՈՉ

9. Եթե ես ստանում եմ տհաճ բովանդակությամբ կամ բռնությունների տեսարանով լուսանկար կամ տեսանյութ, ես այն չեմ փոխանցում իմ ընկերներին:
   ԱՅՈ ՈՉ

10. Եթե ես ակնթարթային հաղորդակցման սենյակում ստանում եմ ոչ պատշաճ բովանդակությամբ հաղորդագրություններ, ես այդ մասին հայտնում եմ մոդերատորին:
    ԱՅՈ ՈՉ

Քանի անգամ ես պատասխանել այո:

9-ից 10 դրական պատասխան. Շնորհավորում ենք, դու հաղորդակցման ոլորտի փորձագետ ես: Շարունակի՛ր քո աշխատանքը առցանց համակարգում և հետևի՛ր վերջին նորություններին՝ այցելելով www.webwise.ie պորտալը

6-ից 8 դրական պատասխան. Շատ լավ է: Երևում է, որ բավականին բան գիտես համացանցում հաղորդակցվելու մասին: Այնուամենայնիվ, քո ժամանակն օգտագործի՛ր ավելին իմանալու համար:

6-ից քիչ դրական պատասխան. Քո գիտելիքները կատարելագործման կարիք ունեն: Համացանցում «նավարկելիս» անհրաժեշտ է իմանալ ապահովության կանոնները: Ավելի մանրամասն տեղեկություններ ստացի՛ր քո ծնողներից և ուսուցիչներից: Մի՛ մոռացիր այցելել www.webwise.ie պորտալը:

Արդյո՞ք ճիշտ եք հասկացել

Լրացրու՛ բաց թողնված բառերը… եթե կասկածում ես, նայի՛ր տեքստը.

- Երբ դու օգտվում ես համացանցից, քո ..... կամ քո մասին նշված տեղեկությունները կարող են հասանելի դառնալ տասնյակ, հարյուրավոր, հազարավոր և անգամ միլիոնավոր մարդկանց:

- Քո ..... պաշտպանելը չի նշանակում կեղծ տեղեկություններ տարածել քո ինքնության մասին: Դու այնուամենայնիվ ..... ես համացանցում քո կատարած յուրաքանչյուր գործողության ու ասած ամեն բանի համար:

- Հրաժարվի՛ր հանդիպել ..... հետ, եթե նույնիսկ նրանք քո «առցանց ընկերներն» են: Ծնողներիդ միշտ ..... ՝ ԱՎԵԼԻ ԼԱՎ Է ԱՊԱՀՈՎ ԼԻՆԵԼ, ՔԱՆ ԱՓՍՈՍԱԼ

- ..... նշանակում է համացանցում այլ անձանց հետ շփվելիս նրանց հետ ..... այնպես ինչպես կցանկանայիր որ ..... քեզ հետ:

- ..... մի պատկեր է, որն արտահայտում է քո հույզերը կամ զգացողությունը:

- Խելացի մտածված ..... պետք է լինի երկար, կազմված լինի առնվազն 8 նիշից, որտեղ կլինեն և՛ մեծատառեր, և՛ փոքրատառեր, ինչպես նաև ունենա թվեր և ..... նշաններ:

- Գաղտնաբառը իսկապես լավն է, եթե այն .....:

- Եթե ստանում եմ տհաճ բովանդակությամբ կամ բռնությունների տեսարանով լուսանկար կամ տեսանյութ, ես այն ..... իմ ընկերներին:

- Նկարները փոխանցեք միայն ..... և վստահելի մարդկանց:

ՊԱՏԿԵՐԵ՛Ք ԱՅՆ ՀՐԱՎԻՐԱՏՈՄՍԸ, ՈՐՆ ԱԼԵՔՍԸ ՍՏԱՑԵԼ Է ԻՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՑ: ՑՈՒՅՑ ՏՎԵ՛Ք ԿԻԲԵՐՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱԿԱՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ ԿԱՄ ԿԱՐԳԱԽՈՍԸ:





ԿԻԲԵՐՀԵՏԱՊՆԴՈՒՄ

ԿԻԲԵՐՀԵՏԱՊՆԴՄԱՆ ՄԻՋԱԴԵՊ

Մի օր Ալեքսը դպրոցից տուն եկավ հուսահատ դեմքով: Պայուսակը հատակին շպրտելով՝ նա փռվեց բաղկաթոռին: Նրա ծնողները, քույրը՝ Աննան ու իրենց ընկեր Հելենը, որն այդ պահին թեյ էր խմում, զարմացած բարձրացրին հոնքերը:
Հայրիկը մեղմ ձայնով հարցրեց նրան, թե արդյո՞ք ամեն ինչ կարգին է: Ալեքսը սկզբում կարկամեց, իսկ հետո բացատրեց ամեն ինչ: Նրա ընկերներից մեկը շարունակաբար ստանում էր տհաճ բովանդակությամբ հաղորդագրություններ:
Տղան այդ մասին խոսել էր իր ծնողների և ուսուցչուհու հետ և ասել նրանց, թե ով էր ուղարկել այդ հաղորդագրությունները: Ուսուցչուհին էլ այդ օրը ամբողջ դասարանին պատմել էր կատարվածի մասին: Ալեքսը բացեց պայուսակը, այնտեղից հանեց հրավեր և հանձնեց ծնողներին:
Դրան ի պատասխան ուսուցիչները հայտարարել էին «հակահետապնդման շաբաթ»՝ տարբեր միջոցառումներ կազմակերպելու համար:
- Ընկերդ ճիշտ արեց, որ խոսեց ծնողների հետ,-ասաց Ալեքսի մայրը:
- Եվ նրա ծնողները նույնպես պատասխանատու զտնվեցին՝ այդ հարցը բարձրացնելով ուսուցիչների մոտ:
- Հուսով եմ, որ դուք երկուսդ էլ հասկանում եք, որ միշտ կարող եք խոսել մեզ հետ,-ավելացրեց նա՝ նայելով Ալեքսի և Աննայի աչքերին, և շարունակեց, - եթե անգամ հարկ լինի ասել, որ ինչ-որ հիմար բան եք արել:

- Իսկապես: Խնդիրների մասին խոսելը հեշտացնում է դրանց լուծումը, -ավելացրեց Ալեքսի հայրը:
-Ձեր դասարանում տեղի ունեցածը մեզ բոլորիս՝ ծնողներիս, նաև ուսուցիչներին և երեխաներին հնարավորություն է տալիս խոսել կիբերհետապնդումների մասին և մշակել հետագայում դրանց կանխարգելմանը ուղղված միջոցառումներ:
-Իրականում, ես կիբերհետապնդման եմ ենթարկվել դպրոցում, երբ տաս տարեկան էի,-ասաց Հելենը:
-Բայց այդ հետապնդումները աստիճանաբար դադարեցին, որովհետև ես միշտ արհամարհում էի դրանց: Իսկ հետո ընդհանրապես հրաժարվեցի այդ խաղից, -շարունակեց նա:

-Լավ կլիներ այդ մասին ծնողներիս ավելի շուտ ասեի, որովհետև երբ այդ հարցը բարձրացրի նրանք շատ արագ լուծումներ գտան և ես հանգստացա: Հիմա ես գիտեմ, որ մենք միշտ ավելի ուժեղ ենք, երբ դժվարությունները հաղթահարելիս ապավինում ենք այն մարդկանց, որոնց վստահում ենք և որոնք մեր մասին հոգ են տանում:

-Հը՛մ,-բացականչեց Աննան, - այն միտքը, թե մարդիկ ինչ հիմար կարող են լինել, ինձ խելագարության է հասցնում:

- Գիտեի՞ր, որ Ալեքսի հետ դասարանում պատահածը իսկական կիբերհետապնդման օրինակ է,-հարցրեց Աննան:
Հելենը հետաքրքրասիրությամբ նայեց նրան:

-Այսինքն՝ երբ համացանցը և բջջային հեռախոսները օգտագործվում են՝այլ մարդկանց ոչ պատշաճ բովանդակությամբ հաղորդագրություններ ուղարկելու համար,-բացատրեց Հելենը:

- Այստեղ ասված է, որ մենք բոլորս պետք է կարճ տեքստերով շարադրենք մեր մտքերը կիբերհետապնդման մասին:

-Ես արդեն գիտեմ՝ ինչպես այն ներկայացնեմ, գուցե ինձ ասեք ձեր կարծիքը, երբ ավարտե՞մ, - հարցրեց նա, իր քայլերն ուղղելով դեպի համակարգիչը:

Բոլորը համաձայնվեցին:

ԱԼԵՔՍԻ ՏԵՔՍՏԸ

Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած վայրում իրեն ապահով և լավ զգալու իրավունք:

-Պատկերացրու՛ ֆուտբոլային խաղ. հակառակորդ թիմերը պետք է պահպանեն խաղի կանոնները: Դատավորը հսկում է խաղը՝ հետևելով, որ խաղացողները խախտումներ թույլ չտան: Եթե խաղացողն իրեն վատ է պահում, դատավորը նրան տալիս է նախազգուշացում. նոր խախտում գրանցելիս, դրան կարող է հաջորդել երկրորդը, որից հետո նա հեռացվում է խաղադաշտից:

-Անարդար խաղացող մարզիկին ֆուտբոլում անվանում են ԵԶ (bully): Նրանք փչացնում են խաղը՝ թույլ չտալով, որ ուրիշները այն վայելեն: Դրանք հաճախ ինքնավստահության պակաս ունեցող մարդիկ են:

Մենք կարող ենք արգելակել հետապնդումները՝ հետևելով ֆուտբոլային դատավորների օրինակին: Մենք կարող ենք ցույց տալ նրանց, որ այդպիսի վարքագիծն անընդունելի է և նրանց թույլ չի տրվի մասնակցել խաղին մինչև չհրաժարվեն ագրեսիվ պահվածքից:

-Բոլորն են սխալներ անում, բայց ոչ բոլորն ունեն համարձակություն դրանք ընդունելու ու ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ խնդրելու համար: Կարծում եմ, որ մենք բոլորս պետք է դժվարության պահին սատար կանգնենք մեր ընկերներին և համոզվենք, որ ոչ մի նման բան այլևս դպրոցում չի պատահի:

Հետևելով Ալեքսի օրինակին՝ նշե՛ք հինգ պատճառ, որոնք հիմք կհանդիսանան որևիցե մեկին կարմիր քարտ տալու համար:

1. .....

2. .....

3. .....

4. .....

5.....

Ալեքսը սենյակում բարձրաձայն կարդում է իր տեքստը:
-Կարծում եմ, որ բավականին լավ պարզաբանեցիր, որ անձի դեմ ագրեսիվ գործելը ՉՈՒՆԻ ԱՐԴԱՐԱՑՎԱԾ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ: Քո տեքստը նաև ընգծում է այն փաստը, որ կիբեր խուլիգաններին հարկավոր է ստիպել իրենց ճիշտ պահել և հարգել կանոնները,-ասաց Ալեքսի մայրը:
-Բայց ինձ թվում է՝ ինչ-որ բան պակասում է,-ասաց Աննան:

-Դու այնտեղ չես ներառել քո ոսկե կանոնները:

ԱԼԵՔՍԻ ՈՍԿԵ ԿԱՆՈՆՆԵՐԸ



Ինչպե՞ս վարվել կիբեր խուլիգանների հետ.

- *Արհամարհի՛ր նրանց: Մի՛ սևեռիր նրանց վրա այն ուշադրությունը, որ նրանք պահանջում են:*
- *Քեզ թող չանհանգստանցի նրանց վարքագիծը: Նրանց վատ պահվածքի համար դու մեղավոր չես:*
- *Կիբեր խուլիգանների հաղորդագրությունները պահի՛ր որպես ապացույց:*
- *Իրավիճակի մասին հայտնի՛ր քեզ հավատարիմ և վստահելի մեծահասակներին:*

ՀԵԼԵՆԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐԸ

http://www.nehb.ie/coolschoolbullyfree/kids1.htm -Այցելելով կիբեր հարձակումների չենթարկվող այս դպրոցական կայքը՝դուք կծանոթանաք նրանց կասեցման եղանակներին:

http://www.stopbullying.org – Այստեղ դուք կարող եք գտնել կիբեր հարձակումների մասին ծաղրանկարներ

https://www.safe.am/ Այս կայքի միջոցով կարող եք ուղարկել էլեկտրոնային հաղորդագրություններ, եթե օգնության կարիք ունեք:

Անվճար հեռախոսահամար
080061111

ՍՏՈՒԳԵ՛Ք ՁԵՐ ՏԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

- Մեր ընտանիքում բոլորը համաձայն են, որ կիբերհետապնդումն ընդունելի երևույթ չէ: **ԱՅՈ ՈՉ**
- Իմ ծնողները ներգրավված են ծնողական միություններում և արդեն քննարկել են՝ ինչպես կանխարգելել կիբերհետապնդումները դպրոցում: **ԱՅՈ ՈՉ**
- Ես միայն ինձ ծանոթ մարդկանց եմ տալիս իմ էլեկտրոնային հասցեները և բջջային հեռախոսի համարը: **ԱՅՈ ՈՉ**
- Ես արգելափակում եմ հաղորդագրություն ուղարկող այն անձանց տվյալները, որոնք անցանկալի են իմ հասցեացուցակում: **ԱՅՈ ՈՉ**
- Ես երբեք մարդկանց չեմ փոխանցում այնպիսի հաղորդագրություններ կամ նկարներ, որոնք կարող են վիրավորել նրանց: **ԱՅՈ ՈՉ**
- Ես երբեք վեբ խցիկ չեմ օգտագործում, երբ շփվում եմ անծանոթ մարդկանց հետ: **ԱՅՈ ՈՉ**
- Գաղտնաբառերը գաղտնիք են. մենք դրանք երբեք այլ անձանց չենք փոխանցում: **ԱՅՈ ՈՉ**
- Ես երբեք չեմ պատասխանի կիբեր խուլիգանի կողմից ուղարկված հաղորդագրությանը: **ԱՅՈ ՈՉ**
- Գիտե՞ս արդյոք հայկական այնպիսի լավ կայք, որտեղից կարող ես իմանալ՝ ինչպես արձագանքել կիբերհետապնդումներին **ԱՅՈ ՈՉ**
- Եթե իմ կամ ընկերներիցս որևէ մեկի դեմ իրականացվի կիբերհետապնդում, ես այդ մասին կհայտնեմ ամենաքիչը մեկ մեծահասակի: **ԱՅՈ ՈՉ**

Քանի՞ դրական պատասխան ունես

9-ից 10 դրական պատասխան. Շնորհավորում ենք: Դու իսկական չեմպիոն ես: Շարունակի՛ր ակտիվ գործունեությունդ և հետևի՛ր www.webwise.ie և www.safe.am կայքերում հրապարակվող վերջին նորություններին:

6-ից 8 դրական պատասխան. Շատ լավ է: Երևում է, որ մտահոգվում ես կիբերհետապնդումների խնդրով: Քեզ հարկավոր է ավելին իմանալ այս իրավիճակում ճիշտ վարվելու կանոնների մասին: Խոսի՛ր որևէ մեծահասակի հետ կամ այցելի՛ր www.webwise.ie և www.safe.am կայքերը:

6-ից քիչ դրական պատասխան. քեզ հարկավոր է կատարելագործել քո գիտելիքները: Համացանցում կարող ես նավարկել հաճույքի համար կամ ուսուցողական նյութեր գտնելու նպատակով, բայց պետք է անպայման իմանաս անվտանգության կանոնները: Մի՛ մոռացիր այցելել www.webwise.ie և www.safe.am կայքերը:

Արդյո՞ք ճիշտ եք հասկացել

Լրացրու՛ բաց թողնված բառերը... եթե կասկածում ես, նայի՛ր տեքստը.

- Կիբեր խուլիգանները մարդիկ են, որոնք ..... խաղի կանոններ չեն պաշտպանում: Նրանք ..... խաղը՝ թույլ չտալով, որ ուրիշները վայելել այն:
- Խնդիրների մասին ..... հեշտացնում է դրանց լուծումը:
- Կիբերհետապնդումը ..... արարք է:
- ..... նշանակում է օգտագործել համացանցը և բջջային հեռախոսները այլ մարդկանց հետապնդելու և տհաճ հաղորդագրություններ ուղարկելու նպատակով:
- Ես ..... եմ այն հասցեատերերին, որոնք անցանկալի անձինք են իմ հասցեների ցուցակում:
- Ես տալիս եմ իմ էլ. հասցեները, մականունները և բջջային հեռախոսի համարներ միայն ինձ ..... մարդկանց:
- Ես երբեք չեմ ..... կիբեր խուլիգանից ուղարկված հաղորդագրությանը:

ՀՎԱՐՃԱՆՔ ԵՎ ՆԵՐԲԵՌՆՈՒՄ

ԻՆՉ ՓԱՅԼՈՒՄ Է, ՈՍԿԻ ՉԷ

Համալսարանի դասախոսությունից հետո, մինչ ընկերներին հանդիպելը, Հելենը կարճ ժամանակով այցելեց Աննային և Ալեքսին:

- Հելե՞ն, գիտեի՞ր, որ Ալեքսը գտել է մի կայք, որտեղից կարող ես անվճար հեռախոսազանգի երաժշտություն (ռինգտոններ) ներբեռնել:

- Ո՛չ, նա ինձ այդ մասին չի ասել, բայց դու կարող էիր մի քիչ գումար խնայել, եթե ասեիր ինձ,-քրքջաց Հելենը: Համացանցում կան անվճար ծառայություններ, բայց հեռախոսազանգի երաժշտությունը, պաստառները, տեսաֆայլերը, ավատարներն ու այլ նման ծառայությունները հազվադեպ են անվճար լինում:

- Եթե ավելի ուշադիր ուսումնասիրես կայքը, հավանաբար կհայտնաբերես փոքր տառերով գրված գրություն՝ ծառայությունների գնի մասին: Հեռախոսազանգի երաժշտությունը, վիկտորինաները /quizzes/, խաղերը և նմանատիպ այլ բաներ գայթակղության հիանալի միջոց են՝ մարդկանց այսպես կոչված «անվճար» ծառայությունների բաժանորդագրման դրդելու համար:

Բացե՛ք ձեր սիրելի որոնման համակարգը: Այնտեղ հավաքե՛ք free ringtones (անվճար հեռախոսազանգերի երաժշտություն) արտահայտությունը և տեսե՛ք ինչպիսին կլինի ձեր որոնման արդյունքը: Ստուգեք մի քանի կայք-էջեր: Կարո՞ղ եք ինչ որ թակարդներ գտնել:

.....

.....

.....

.....

.....

- Տեսա՞ր՝ ինչպես աշխատեց, նույնիսկ քո և Ալեքսի պարագայում,-ժպտալով ավելացրեց Հելենը՝ բացականչելով,-ամեն փայլող բան ոսկի չէ՛:

- Հը՛մ, տեսնում եմ,-ասաց Աննան:
- Ինձ պատմի՛ր այդ մասին ավելին, որպեսզի կարողանամ Ալեքսին զարմացնել:

- Դե լավ, Զի, ուրախությամբ,-պատասխանեց Հելենը:

- Համացանցում ապրանքները գովազդվում են և կարող են գնվել: Ուստի, եթե դուք բանիմաց սպառող չեք, ապա հեշտությամբ կարող եք թակարդն ընկնել: Հիշու՞մ եք, երբ մենք խոսում էինք գաղտնիությունը (մասնավորությունը) պաշտպանելու մասին: Դու պետք է խուսափես լրացնել այնպիսի առցանց փաստաթղթեր, որտեղ պահանջվում է նշել քո մասին անձնական տվյալներ, ասենք՝ անուն կամ էլ. փոստ: Լրացրու միայն այն ձևերը, որոնց դեպքում քեզ հստակ հայտնի է, թե ինչու է հավաքագրվում տվյալ տեղեկատվությունը:



- Իսկ շուտով, սիրելի Զի, դու կհասկանաս նաև, որ այս կայքերում կան բազմաթիվ դուրս լողացող պատուհաններ, այսինքն՝ փոքր պատուհաններ, որոնք պարունակում են հաղորդագրություններ կամ նկարներ: Երբեք մի՛ բացեք դրանք: Փակե՛ք դուրս լողացող պատուհանները՝ սեղմելով աջ անկյունում գտնվող կարմիր խաչը:
- Բայց ոչ միշտ,-շարունակեց Հելենը:
- Ոչ բոլոր դուրս լողացող պատուհաններն են առաջարկում ծառայություններ: Քո հակավիրուսային ծրագրում նույնպես կարող են օգտագործվել դուրս լողացող պատուհաններ, որտեղ կգտնես և՛ քեզ համար կարևոր հաղորդագրություններ, և՛ այնպիսի հաղորդագրություններ, որոնք պետք է արհամարհել: Նորից պետք է գործի քո առողջ բանականությունը:

- Իսկ եթե վստահ չե՞մ,-հարցրեց Աննան:

- Եթե կասկածներ ես ունենում, միշտ հարցրու՛,-պատասխանեց Հելենը:
- Իհարկե՛, նախքան առցանց համակարգում գնումներ անելը միշտ խորհրդակցի՛ր ծնողներիդ հետ: Ի վերջո նրանք են հոգում ընտանիքի ֆինանսական հարցերը: Դե ինչ, կարծու՞մ ես, որ պատրաստ ես եղբորդ զարմացնել,-հարցրեց Հելենը Աննային:

ԱՌՑԱՆՑ ԽԱՂԵՐ

Մինչ Աննան ու Հելենը խոսում էին այն մասին, որ ամեն փայլուն բան ոսկի չէ, Ալեքսը որոշեց օգտագործել իր տրամադրության տակ եղած կես ժամը՝ իր սիրած խաղը խաղալու համար: Հայրիկն ու մայրիկը, խաղով հետաքրքրված, խնդրեցին որ նա ցույց տա, թե ինչի մասին է այն:
Համարելով խաղը բավականին հետաքրքրաշարժ՝ նրանք երկուսն էլ առիթը բաց չթողեցին Ալեքսին հիշեցնելու այլ անձանց հետ առցանց խաղեր խաղալիս իր ինքնությունը գաղտնի պահելու մասին: Նրանք նաև ուզում էին իմանալ, թե ինչ խաղեր է խաղում իրենց որդին և մեղմորեն հիշեցրին նրան, որ երբեք առանց իրենց հարցնելու խաղեր չներբեռնի, քանի որ դրանից կարող է վնասվել համակարգիչը:

-Այդ ինչպե՞ս,-հարցրեց Ալեքսը:

-«Անվճար» կոչվող խաղերը երբեմն կարող են պարունակել թաքնված վիրուսներ, որոնք առանց հասկանալու կարող ես տեղադրել քո համակարգչում,-բացատրեց նրան մայրը:

Ո՞րն է քո սիրելի համակարգչային խաղը: Պարզիր՝ ծնողներդ գիտե՞ն արդյոք այդ մասին և կարո՞ղ են այն նկարագրել: Եթե նրանք ոչին չեն կարող հուշել, նախ նրանց բացատրի՛ր, իսկ հետո թո՛ղ, որ նրանք գրեն կարճ նկարագրություն: Արդյո՞ք ծնողներիդ համար ամեն ինչ պա՛րզ է:

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԽԱՂԸ

.....

.....

.....

.....

.....

Ինչպիսի՞ն է քո գնահատականը տաս միավորանոց սանդղակով:

/10

Այստեղ ծնողը պետք է տա երեխայի սիրելի խաղի կարճ նկարագիրը, իսկ երեխան պետք է պատկերի այն:



ՖԱՅԼԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ ©

Ալեքսի ու Աննայի մայրը պատրաստվում է տոնել իր ծննդյան օրը: Նա և հայրիկը ուզում են, որ երեկույթին լինի լավ երաժշտություն: Համակարգչով խաղալուց հետո ամբողջ ընտանիքը հավաքվեց հյուրասենյակում՝ քննարկելու երեկույթի հետ կապված հարցեր: Ալեքսը վիճում էր, որ համացանցից կարելի է բեռնել երգեր: Մայրիկը համաձայն էր նրա հետ, բայց ասում էր, որ իրենք չեն ուզում անօրինական կերպով երաժշտություն ներբեռնել. հարկավոր է հարգել ստեղծագործողների եւ կատարողների հեղինակային իրավունքը:
-Հեղինակային իրավունք, ի՞նչ է դա,-հարցրեց Աննան:

Մայրիկը փորձեց նրան բացատրել հետևյալ կերպ.

- Դա կարող է լինել երաժշտություն, ֆիլմեր, նկարներ, համակարգչային ծրագրեր և այլ բաներ, որոնք ստեղծվում են արվեստագետների, ծրագրավորողների և այլ մասնագետների կողմից: Այդ մարդիկ համարվում են հեղինակներ: Հեղինակներն իրենք են որոշում՝ ինչպես և ում կողմից պետք է օգտագործվեն իրենց ստեղծագործությունները:

-Երբ դու ինչ-որ բան ես ստեղծում, իրավունք ունես որոշել՝ տարածե՞լ այն այլ անձանց շրջանում, թե ոչ,-ավելացրեց Հելենը:
-Եթե գրում ես երգ, Աննա՛, դու կարող ես այն փոխանցել այլ անձանց կամ հրապարակել համացանցում: Սկզբունքորեն դու իրավունք ունես տարածել այն փաստաթղթերը կամ ֆայլերը, որոնք ինքդ ես ստեղծել:

-Այդ դեպքում ի՞նչ կասես երաժշտության մասին, որը հասանելի է համացանցում,-հարցրեց Ալեքսը:

-Իրականում, այն երաժշտությունը կամ ֆայլերը, որ դու գտնում ես համացանցում մեծ մասամբ անօրինական պատճեններ են,-պատասխանեց Ալեքսի հայրը:
-Դա նշանակում է, որ ոչ մեկը իրական տերերից թույլտվություն չի խնդրել դրանք ցանցում տարածելու համար: Դա համարյա նույնն է, ինչ՝ մարդկանցից որևէ իր հափշտակելը կամ խանութ թալանելը… Միակ տարբերությունն այն է, որ այդ ամենը արվում է առցանց համակարգում:

-Բացի այդ, այն կայքերը, որոնց միջոցով մարդիկ երաժշտություն կամ ֆիլմեր են տարածում, որպես կանոն լի են վիրուսներով ու լրտեսածրագրերով,-ավելացրեց Հելենը:
-Բայց ես կարող եմ առաջարկել այնպիսի կայքեր, որտեղ դուք կարող եք փոքր գումարի դիմաց, երբեմն անգամ անվճար ներբեռնել երաժշտություն՝ չխախտելով որևէ օրենք:

ՀԵԼԵՆԻ ՈՍԿԵ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- *Հիշե՛ք, որ համացանցից երաժշտություն և ֆիլմեր ներբեռնելը սովորաբար համարվում է անօրինական, բացառությամբ այն դեպքերի, երբ նման գործողությունների համար օգտագործվում է օրինական կայք*
- *Մի՛ վստահեք ձեր լսած այնպիսի տեղեկությանը, որը ՉԱՓԻՑ ԼԱՎՆ Է ճիշտ լինելու համար*
- *Հետևե՛ք ձեր համակարգչի պաշտպանությանը. արտոնագրված ֆայլեր ներբեռնելիս միշտ օգտագործե՛ք նորացված հակավիրուսային ծրագիր*
- *Ցանկացած ֆայլ ներբեռնելիս նախքան բացելը պահպանեք և զննեք այն:*
- *Անծանոթ կայքերից խաղեր մի՛ ներբեռնեք և միշտ միացրե՛ք հակավիրուսային ծրագիրը*
- *Ձեր անձնական էջը ստեղծելու, ակնթարթային հաղորդագրություններով շփվելու և համացանցային խաղեր խաղալու ժամանակ միշտ պահպանե՛ք ձեր գաղտնիությունը (մասնավորությունը)*
- *Անձնական տեղեկություններ պահանջող առցանց փաստաթղթերի հանդիպելիս, լրացրեք միայն լիովին վստահելի ձևաթղթերը:*



- *Եթե կարծում եք, որ ինչ-որ ծառայության բաժանորդագրվելով ընկել եք խարդախների թակարդը, անմիջապես ասե՛ք այդ մասին ձեր ծնողներին. բոլորն էլ կարող են սխալվել*
- *Փակե՛ք դուրս լողացող պատուհանները՝ սեղմելով աջ անկյունում գտնվող կարմիր խաչը: Երբեք մի՛ հետևեք այս պատուհանների հրահանգներին*

ՀԵԼԵՆԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐԸ

http://www.pro-music.org
Այստեղ դուք կարող եք օրինական եղանակով երաժշտություն ներբեռնելու հարյուրավոր կայքեր գտնել:

http://www.webwise.ie
Համաշխարհային սարդոստայնում կարող եզ օրինական եղանակով երաժշտություն ներբեռնելու կայքեր գտնել: Այս կայքերում երաժիշտները տեղադրում են իրենց գործերը, որպեսզի իրենց երկրպագուները ունկնդրեն և տեղեկանան համերգների և նոր ալբոմների մասին: Այստեղ դու կարող ես գտնել քո սիրելի երաժշտի, խմբի կամ ապրանքանիշի կայքը:

ՍՏՈՒԳԻՐ ԹԵ ՈՐՔԱՆ ԽԵԼԱՑԻ «ՆԱՎԱՎԱՐ» ԵՍ

- Առցանց խաղեր խաղալիս ես միշտ պաշտպանում եմ իմ մասնավորությունը՝ ստեղծելով ապահով անձնական էջ:
  ԱՅՈ ՈՉ
- Ես խուսափում եմ ներբեռնել խաղեր պատահական կայքերից, որովհետև նրանք կարող են պարունակել վնասակար ծրագրեր:
  ԱՅՈ ՈՉ
- Ես երբեք ցանցում չեմ լրացնում անձնական տվյալներ պահանջող փաստաթղթեր, բացառությամբ այն դեպքերի, երբ ես լիովին վստահում եմ տվյալ աղբյուրին:
  ԱՅՈ ՈՉ
- Ես երբեք ծնողներիս բացակայությամբ առցանց գնումներ չեմ կատարում:
  ԱՅՈ ՈՉ
- Ես երբեք առանց ծնողներիս թույլտվության չեմ ներբեռնում «անվճար» հեռախոսազանգի երաժշտություն:
  ԱՅՈ ՈՉ
- Համացանցից երաժշտություն ներբեռնելուց առաջ ես միշտ հետևում եմ հեղինակային իրավունքի կանոններին:
  ԱՅՈ ՈՉ
- Նախքան ապրանքներ կամ ծառայություններ գնելը /պատվիրելը/ մենք համեմատում ենք դրանց գները տարբեր խանութներում առաջարկվող համապատասխան ապրանքների գների հետ:
  ԱՅՈ ՈՉ
- Կասկածելի կայքերում դուրս լողացող պատուհանների հանդիպելիս ես միշտ դրանք փակում եմ՝ սեղմելով վերևի աջ անկյան կարմիր խաչը:
  ԱՅՈ ՈՉ

• Ես երբեք իմ ստացած ֆայլերը առանց զննելու չեմ բացում:
ԱՅՈ ՈՉ
• Առցանց գնումներ կատարելուց առաջ ես և ծնողներս հնարավորության դեպքում նախընտրում ենք փորձարկել համապատասխան ապրանքները:
ԱՅՈ ՈՉ

Քանի՞ անգամ ես պատասխանել այո

9-ից 10 դրական պատասխան. Շնորհավորում ենք: Դու գիտես՝ ինչպես ապահով զվարճանալ համացանցում: Շարունակի՛ր քո կանխարգելիչ գործունեությունը առցանց համակարգում և տեղեկացի՛ր վերջին նորություններին՝ այցելելով www.webwise.ie և www.safe.am կայքերը:

6-ից 8 դրական պատասխան. Շատ լավ է: Ինչպես երևում է, դու շատ բան գիտես առցանաց խաղերի և ներբեռնումների մասին: Ավելին իմանալու համար այցելի՛ր www.webwise.ie և www.safe.am կայքերը:

Վեցից քիչ ճիշտ պատասխան. Քեզ հարկավոր է կատարելագործել քո գիտելիքները: Համացանցում նավարկելը կամ զվարճանալը հնարավոր է միայն այն դեպքում, երբ գիտես ապահովության կանոնները: Այս առումով տեղեկատվության լավ աղբյուր են www.webwise.ie և www.safe.am կայքերը:

Արդյո՞ք ճիշտ եք հասկացել

Լրացրու՛ բաց թողնված բառերը... եթե կասկածում ես, նայի՛ր տեքստը.

• Հեռախոսազանգի մեղեդիները, պաստառները, mp3 ֆայլերը, ավատարներն ու այլ նման ծառայությունները հազվադեպ են ..... լինում:

• Առցանց ..... լրացրեք միայն այն դեպքում, երբ հստակ գիտեք հավաքագրվող տեղեկատվության նպատակը:

• Համացանցում ապրանքները գովազդվում են և կարող են գնվել: Ուստի, եթե բանիմաց սպառող չեք, հեշտությամբ կարող եք .....:

• Այն երաժշտությունը կամ ֆայլերը, որ գտնում եք համացանցում մեծ մասամբ ..... պատճեններ են:

• Փակե՛ք դուրս լողացող պատուհանները՝ սեղմելով աջ անկյան կարմիր .....:

• Անձնական էջ ստեղծելիս, ակնթարթային հաղորդագրություններ փոխանակելիս կամ խաղեր խաղալիս միշտ պաշտպանե՛ք ձեր ..... .

• Սկզբունքորեն դուք իրավունք ունեք ..... այն փաստաթղթերը կամ ֆայլերը, որոնք ..... եք ստեղծել:

• Անծանոթ կայքերից խաղեր մի՛ ..... և միշտ գործարկե՛ք հակավիրուսային ծրագիրը:
.

Վերնագիր: Ընտանեկան համացանցային ապահովության հավաքածու • Ստեղծվել է Insafe/Liberty Global-UPC 2008 թ.
Prefix: 9789078209 • Id 51950 • ISBN-NUMBER: 9789078209577 • EAN: 9789078209577

Հեղինակային իրավունք: Այս աշխատանքն արտոնագրված է Creative Commons Attribution-No Derivative Works 3.0 Unported արտոնագրով:
Արտոնագրի կրկնօրինակը տեսնելու համար այցելեք՝ http://creativecommons.org/licenses/by-nc-nd/3.0